

Հրատարակչատան կողմէ

«Երբ պատանի ենք» գիրքը նախատեսուած է պատանի
ու երիտասարդ ընթերցողներուն, ինչպէս նաեւ
դպրոցականներուն համար, որպէս օժանդակ ընթերցարան:

Կը ներկայացուին ժամանակակից հայ գրողներու
պատմուածքներէն խտացուած ու պարզացուած նմուշներ,
որոնց մէջ հերոսները կ'երեւին իրենց պատանիի յուզումներով ու
ապրումներով: Գիրքին համար հիմք հանդիսացած է
Մարօ Գալայճեան-Քիւրքճեանի ու Յարութիւն Քիւրքճեանի
կողմէ 2006-ին հրատարակուած «Հայրենի աղբիւր»ի
գրադարանի վեցերորդ գիրքը՝ «Տասը աշխարհ»ը:
Կարդալով այս պզտիկ գիրքը՝ ընթերցողը պիտի
կատարէ մեծ շրջապտոյտ մը՝ երկրային ու աննիւթական
աշխարհագրութիւններու վրայ, հաասարապէս:
Պատմուածքները տեղադրուած են մանկութենէ դէպի
վաղ երիտասարդութիւն ընթացող ժամանակագրութեամբ
եւ օժտուած են բառարանով:

Հրատարակութեան ու խմբագրութեան վերաբերեալ

ԵՐԲ ՊԱՏԱՆԻ ԵՆՔ

Արաս Հրատարակչություն
A r a s Y a y ı n c ı l ı k

İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Kat 1

34430 Tünel, Beyoğlu-İstanbul

Tel: (0212) 252 65 18 - 243 06 02

www.arasyayincilik.com

info@arasyayincilik.com

Sertifika No: 44967

ARAS - ԱՐԱՍ 204

ԵՐԲ ՊԱՏԱՆԻ ԵՆՔ

Հատորը կազմեցին ու խմբագրեցին՝
Մարո Գալայճեան-Քիրքճեան
Յարութին Քիրքճեան

Հրատարակութեան պատրաստեց՝
Սեւան Տէյիրմենճեան

Կողքը պատրաստեց՝
Արէտ Կըճըր

Տպագրութիւն
Սենա Օֆսեթ

Ա տպագրութիւն փետրուար 2018, Ստանպուլ
Բ տպագրութիւն սեպտեմբեր 2023, Ստանպուլ

ISBN 9786052100141

ԵՐԲ ՊԱՏԱՆԻ ԵՆՔ





Կարօ Սասունի

Ծնած է Սասուն, 1889-ին: Նախակրթութիւնը ստացած է ծննդավայրին՝ Խուլբի Ահարոնք գիւղին մէջ: 1901-ին փոխադրուած է Մուշ, ուր աւարտած է Մուրադ-Մխիթարեան վարժարանը: Աշակերտած է գաւառական գրականութեան յայտնի դէմքերէն Գեղամ Տէր-Կարապետեանին: 1906-1908 թթ. ուսուցչական պաշտօն վարած է Տիգրանակերտի մէջ: Սահմանադրութեան հռչակումէն ետք անցած է Պոլիս, ուր յաճախած է Կեդրոնական վարժարան: 1914-ին աւարտած է Պոլսոյ իրաւաբանական համալսարանը: Ա. աշխարհամարտի ծագումէն վերջ հարկադրաբար կը մեկնի Կովկաս: Հայաստանի Հանրապետութեան մէջ կը վարէ պետական պաշտօններ: 1922-էն ետք սփիւռքի փարբեր գաղութներուն մէջ կը լծուի խմբագրական, կրթական եւ հանրային գործունէութեան: Կը մեռնի 1977-ին:

Սասուն

Լէյլանս

Աշնան ցուրտ իրիկուն մըն էր:

Մայրս նստած է օճախին գլուխը, նահապետի մը պէս, շրջապատուած եղբայրներէս. քիչ անդին հարսերն են իրենց շուրջ դարձող երեխաներով:

Դրացիներ եկած նստած են պատի երկայնքին...

Մեր ձիուն՝ Լէյլանին առատ գարի տուած են, իսկ ինձի համար երկու կաքաւներ կը խորովեն*:

Վերջին ընթրիքն է: Ես ճամբորդ եմ, նոյնիսկ շատ ուշացած: Երկրորդ աշունն է, որ ուսումի համար կ'իջնեմ քաղաք՝ Մուշ:

Անցեալ աշնան, կը յիշեմ, Լէյլանը դեռ մտրուկ* էր: «Երկար ճամբու չէ վարժուած, կը վնասուի», ըսին եղբայրներս: Եւ ես մեկնեցայ խելօք ջորի մը հեծած...

Լէյլանը օրերով չէր մօտեցած խոտի... Քիչ էր մնացեր տունը սուգի մատնէր...

Բայց այս տարի - իմ հրեղէն* ձիս պիտի տանի զիս քաղաք...

Ամրան երեք ամիսները անցան երջանիկ երազի պէս:

Երեք ամիս, դպրոցականի հագուստներովս եւ Լէյլանիս ընկերակցութեամբ պտտեցայ գիւղի հարսերուն, աղջիկներուն եւ հրապարակը հաւաքուած բազմութեան առջեւ:

Լէյլանը, որ գիւղի ժողովուրդը կը սարսափեցնէր իր արծիւի թռիչքներով, ինծի համար եղաւ իմաստուն Քուոկիկ Ջալալի* մը. իմ հրամաններս կատարեց, առանց սանձի պտտեցաւ ետեւէս՝ երբ ուրիշներ սանձով չէին կրնար զսպել զայն...:

Բոլորը ըսին՝ «Հրեղէն ճի է, խօսիլը միայն պակաս կը մնայ»: Բայց ան ինծի համար աւելի հասկնալի էր, քան խօսող արարածները...

Յաջորդ առաւօտ՝ մեր մեկնումն էր:

-Մնաք բարով, մնաք բարով...

-Տղան, լա՛ւ կարդաս...

Գիւղին տնակները ետեւ ձգած՝ եղբօրս եւ ծառայ Արտաշին հետ բլուրները բարձրացանք: Ետ դարձայ եւ մեր հինաւորց* տանիքին վրայ տեսայ մայրս՝ նոյն տեղը արծանի պէս անշարժ:

Հոգիս երկու կէսի բաժնուեցաւ. մէկը դարձաւ դէպի գիւղ, միւսը թափ առաւ Լէյլանի վագքին հետ՝ դէպի նոր հորիզոններ:

Տիգրիսի ալիքներուն քովն ի վեր, կամաց-կամաց կը բարձրանայինք կաճաններէն: Բայց Դարկոշ լեռան կատարները դեռ կը մնային կախուած մեր գլխուն վերեւ...

Լէյլանը հեւքով կ'անցնէր բարձունքէ բարձունք, ու ես ստիպուած էի ամէն կէս ժամ կանգ առնել՝ մեր փոքր կարաւանին սպասելու: Առջեւէն ու ետեւէն, ճամբորդ գիւղացիներու ջորիներուն զանգակները կը զրնգային, հազիւ լսելի՝ Տիգրիսի գոռում-գոչումին* մէջ:

Բնութիւնը ամբողջ լեզու առած՝ կը խօսէր հետս: Կաղնիները գլուխ կը շարժէին, սօսիները կը դողային: Հազար-հազար դարեր, այս ձորը բնութեան կատաղի պայքարը դիտած էր:

Եղբայրս, մտածկոտ, շրջապատը կը քննէ արագ ակնարկով* մը, եւ կը շարունակէ վերելքը: Արտաշին լեզուն բացուած է. ես Լէյլանին կը խօսիմ, իսկ Արտաշը կը պատասխանէ ինծի...: Կը նկատեմ պատի կտոր մը՝ փլած կամուրջի մը կամարներէն մաս մը, կախուած բարձր ժայռէ մը, ուր հիմա արծիւներ միայն կրնան հասնիլ: Արտաշը կածանին քով բարձրացող քարերու դէզ մը ցոյց կու տայ:

-Այս դէզը կը տեսնեմ... «Հարսի գերեզման»ն է: Ձըմեռ ատեն, երբ հարսնետօրներ հարսը շրջապատած կ'անցնէին, ձիւնահիւսը* վերէն ծառ ու ժայռ սրբելով իջած է ձորը, ծածկած է հարս ու հարսնետօր...

Դարերով, անցորդները մէկ-մէկ քար նետած են, ու բարձրացած է այս քարաբլուրը...

- Իսկ ասիկա՝ Գայլի դուռն է...

Արտաշին աչքերուն մէջ վախ կայ. հասած ենք զահվերի մը գլուխը, երկու կողմը՝ անանցանելի ծառ ու թուփերով. հոնկէ կը սկսի էջքը՝ քարէ բնական սանդուխով մը: Շուրջի ժայռերը, վար ծռած, վախազդու են եւ դաւադիր*...

Քիչ մը լռելի ետք, Արտաշը գլուխը օրօրելով կ'աւել-
ցընէ.

-Ամէն տարի մարդու արին կը թափի այս քարերուն
վրայ:

Գիտեմ... Կը դիտեմ եղբայրս: Տասը քայլ առաջ ան-
ցած, ան կը քալէ քիթին տակէն երգ մը մոլտալով. բայց
ձեռքը կը պահէ գէնքին վրայ՝ աչալուրջ*: Է, անոր չորս
մատները ճիշդ հոս թռան սուրի մը հարուածէն. թըշ-
նամին փախաւ հեռացաւ անտառին խորը՝ այս սեւ
քարին վրայ ձգած երկու դիակներ, եղբօրս դաշոյնի*
հարուածներէն ծակծկուած...

Կը հասնինք եղբօրս. անոր մարմինը դող մը ունի,
եւ ձախ ձեռքը, չորս մատներէն զրկուած, թէթեւ կը
ցնցուի:

Դող մը կ'անցնի իմ ալ մարմինէս: Լէյլանի բաշերը*
կը բռնեմ եւ վիզը կը փաթթուիմ, կարծես բնութեան
սարսափին ու մարդոց չարութեան դէմ պաշտպանուե-
լու համար:

Կը միանանք կարաւանին: Ու ժամէ ժամ զօրացող
հովէն քշուած, մայրամուտին կը հասնինք Շէն գիւղը,
կծկուած՝ Դարկոշի գագաթին ճիշդ տակը: Այս ամայի
տեղերուն միակ մարդկային բնակութիւնը՝ դարերէ ի
վեր:

Փոթորկալի գիշերը ծալք-ծալք նստաւ գիւղին վրայ:
Քամին ոռնալով* իջաւ բարձունքներէն, լեցուց ձորերը:
Յածիկ տուները իրենց հիմերէն շարժեցան, աւելի
կծկուեցան մայր հողին մէջ: Լէյլանը վրնջեց* իր իմաս-
տուն աչքերը ուղղած արտոյի ծխնելոյզին:

Ճամբորդները, կրկին-կրկին, դռներուն եղբացուածքէն փոթորիկը հոտուըտացին, ու մտահոգ՝ դարձան կրակին...

Մարդիկ լուռ էին վաղուան անորոշութեան առջեւ:

Բացուեցաւ ճերմակ առաւօտ մը: Ձիւնը լման ծածկած էր մեր լեռնային ճամբան, եւ իջած էր մինչեւ գիւղին վերի մասերը: Փոթորիկը հանդարտած էր, բայց կակուղ ձիւնի մեծ փաթիլները, թիթեռնիկի պէս թռվրուալով, կը պարէին օդին մէջ:

Կարաւանը տեղէն չշարժեցաւ. ջորեպանները* լեռը դիտեցին... եւ իրենց անասունները ջուրի տարին...

Նոր կարաւաններ հասան հարաւէն, եւ շտապով՝ իրենց կարգին ամփոփուեցան գիւղին առջեւ: Զանգակներու ձայնը ձորը լեցուց: Շէնը, այդ փոքր գիւղը, առանց շէնքերու քաղաքի մը երեւոյթը առաւ:

Երեք օր, օրը հարիւր անգամ, մարդիկ դուրս թափուեցան, հովն ու ամպերը քննեցին, եւ հարիւրամեայ ծերունիի մը բերանէն կախուած մնացին: Ամէն անգամին ալ՝ ան փոքրիկ աչքերը թարթեց, ու մինչեւ գօտին իջնող ճերմակ մօրուքը ձեռքերուն փաթթելով՝ ըսաւ. «Աստուծմէ վախցէք, վտանգաւոր է...»:

Չորրորդ առտուն արթնցայ, եւ տեսայ դռներուն առջեւ փռուած արեւը: Երկինքը պայծառ էր. Դարկոշի սպիտակափառ* հասակը, պարզ ու յստակ՝ կը կանգնէր գիւղի ետին:

Կարաւաններուն առաջնորդները դուրս թափած էին. անոնցմէ աւելի համարձակներ՝ ճամբու կը պատրաստուէին. բայց երբ կը տեսնէին մեծամասնութեան վարանումը*՝ հայիոյելով բեռները կը քակէին նորէն:

-Երթանք..., չերթանք...

Վէճ ու կռիւ: Ծերուկը, առանց պատասխան տալու, գլուխը ժխտական շարժելով՝ մէկդի քաշուեցաւ:

Բայց արդէն կէսօր եղած էր: Վճռեցին յաջորդ առտու ճամբայ ելլել՝ եթէ օդը պայծառ մնար:

Առտուան պայծառ արեւը սպիտակ կատարներուն վրայ կը ճառագայթէր, երբ ճամբայ ելանք: Չանգակներուն զրընգոցը ալիք-ալիք կը բարձրանար գիւղէն վեր, երգերուն ու քաջալերական* հայիոյանքներու խառնուած:

Գիւղը մեր ոտքերուն տակն էր: Կ'առաջանայի՝ ոտքերս ամուր դրած Լէյլանի ասպանդակներուն* մէջ:

Գետինի ձիւնը մեր վերելքին հետ աւելցաւ հետզհետէ: Ձորերը անհետացան. շուտով գտնուեցանք ձիւնի ծովի մը մէջ, ուր ջորիները կ'օրօրուէին՝ իրար հետետող նաւակներու պէս: Ճերմակ գորգը կը խշշար հարիւրաւոր ոտքերու տակ:

Ձիւնին մէջ խրած՝ կարաւանը կ'առաջանար դանդաղ, մինչ Լէյլանը անհամբերութեամբ գետինը կը դոփէր*՝ առաջ անցնելու փափաքով:

Եղբայրս գրպաններս լեցուց չամիչ ու ընկոյզի միջուկ:

-Միշտ բան մը դիր բերանդ եւ ծամէ, որ կզակդ չսառի, չկապուի: Այսօր շատ ճամբայ ունինք. Դարկոշին հետ կռիւ ունինք...: Քե՛զ տեսնեմ. ձիւնագնդակ խաղալ է, հա...

Ես Լէյլանին վիզը շոյեցի ամուր հոգիով: Լէյլանին կը վստահէի այնքան՝ որքան պիտի վստահէի այն թեւաւոր հրեղէն ձիւն, որ մամիկս նկարագրած էր իր հեքիաթներուն մէջ:

Քայց շուտով ամպեր բարձրացան՝ չես գիտեր որ ձորերէն, իրենց թետերը բացին Դարկոշի կատարին, ու կախուեցան: Լուռ անձկութիւն* մը տարածուեցաւ կարաւանին վրայ:

Քամին զօրացաւ: Պահ մը ետք՝ ձիւնը լայն թետերով պար բռնեց մեր գլխուն վերեւ: Երկինքը փլաւ, իջնող ձիւնը հեղեղ դարձաւ ու նստաւ կարաւանին վրայ: Ջորիներու զանգակները խոլ կը դողանջէին, մինչ մարդիկ՝ սարսափի մատնուած կը լռէին:

Հովը դարձաւ փոթորիկ: Լեռնադաշտին վրայ ան կը փչէր բոլոր կողմերէն՝ Դարկոշի, Կուրթիկի ու Անտոքի գագաթներէն: Սուրի սուլոցով կ'անցնէր մեր ականջին քովէն. ձիւնով կը ծեծէր երբեմն մեր կոնակը, երբեմն դէմքը: Ճերմակ գորգը կը թանձրանար, կը բարձրանար...

Կարաւանին ծանր մարմինը կը խրէր ձիւնին մէջ: Առաջապահ* ջորիներէն մի քանին իրենց բեռներով տապալած էին արդէն, իրենց տէրերու յուսահատ ականարկին տակ:

Լէյլանը, միշտ անհամբեր, իր սանձը կը ծամէր, ու դժգոհանքով* ձեռքս կը ցնցէր՝ ձիւնին մէջ խրած ջորիներուն քովէն նոր ճամբայ ճեղքելու համար: Անշարժացած ջորեպաններ, կանգնած, հիացումով կը դիտէին անոր թափը:

-Ասլան* ձի է, *ասլան*, - կ'ըսէին, ու կը դառնային իրենց ջորիներուն:

Կարաւանը լրիւ անշարժացաւ. «Ճամբան կորսընցուցած ենք...» աղաղակը տարածուեցաւ ձիւնէ մշուշին մէջ:

Հետախոյզներ* ղրկուեցան, վերադարձան շուարած:
Փոթորիկը ջնջած էր կաճանին հետքերը:

Կեանքի ու մահուան մեծ պայքարը կը բացուէր կատ-
ղած բնութեան ու վախով եղբայր դարձած մարդերու
միջեւ: Ու որքան բնութիւնը ահռելի էր իր կատաղու-
թեամբ, այնքան մարդիկ հիանալի թուեցան ինծի՝
իրենց միասնական հոգիով եւ ամուր կամքով:

Բազմալեզու ամբոխ մը հաւաքուեցաւ կարաւանին
ճիշդ կեդրոնը: Մարդիկ, որ երէկ թշնամի էին, այսօր
եղբայրացած՝ զինակիցներ* կը դառնային՝ բնութեան
դէմ կռուելու համար...

Կարճ խորհրդակցութիւն մը՝ ու ամբոխը կարգա-
պահ բանակի վերածուեցաւ:

Աշխատանքը բաժնուեցաւ, բոլորը գործի ձեռնար-
կեցին: Ծանր բեռները վար առին, ու երեսուն անբեռ
ջորիները առաջապահ կարգեցին: Բոլոր ջորեպաննե-
րէն հաւաքեցին թաղիքները*, որոնք վերարկուի ու
ծածկոցի տեղ կը ծառայէին, ու շարեցին ձիւնին վրայ:
Թաղիքէ «ճամբայ» մը կազմուեցաւ, որուն վրայէն կա-
րաւանը առաջացաւ առանց խրուելու*:

Ու այս յոգնեցուցիչ աշխատանքը բազմաթիւ ան-
գամներ կրկնուեցաւ՝ մշուշի մէջ կորած:

Բայց տարածութիւնը վերջ չունէր: Փոթորիկը միշտ
դէմքերը կը հարուածէր ցուրտ, այրող ձիւնով: Մշուշը
կը խանգարէր հաւաքական աշխատանքը: Ժամերը կը
սահէին մեր դանդաղ քայլերուն տակէն. ու երեկոյեան
մութիւնը կը մօտենար՝ մահու դող մը տարածելով մեր
վրայ:

Ես Լէյլանին հետ կը խօսէի՝ բուրդէ ձեռնոցներով իր վիզը շոյելով եւ չամիչ ու ընկոյզի միջուկ ծամելով: Յօնքերէս կախուած սառի կտորներն ու ցուրտ քամին աչքերս կ'արցունքոտէին, բայց կզակս չէր սառած: Ամէն անգամ որ եղբայրս կը հարցնէր՝ խօսիլ կրնամ, «այո՛» կը պատասխանէի:

Մարդ ու ջրի ակ սպառած էին: Ի վերջոյ կարաւանը կրկին անշարժացաւ, տեղը մնաց խրած: Մարդիկ իրարու վրայ կ'ծկուեցան:

Կարճ խորհրդակցութենէ մը ետք՝ խեղդուկ ձայներ բարձրացան.

-Բեռները թափեցէք, մարդիկ ու անասուններ ազատեցէք՝ ինչպէ՛ս կրնաք...

Սարսուռ* մը անցաւ ամբողջ կարաւանին վրայէն: Մարդիկ իրար խառնուեցան: Ժխոր* բարձրացաւ: Ոմանք դաշոյնով բեռներու կապերը կտրատեցին: Շատեր իրենց ձիւնի մէջ խրած ջրիները չկրցան դուրս քաշել. յուսահատական ու քնքուշ խօսքեր ըսին անոնց, համբուրեցին ճակատը ու անցան:

Այդ իրարանցումին մէջ ես քանի մը քայլ առաջ անցած էի: Շուրջս նայեցայ. եղբայրս ու Արտաշը չտեսայ: Աջ ու ձախ ձայնեցի. ձայնս ժխորին մէջ կորսուեցաւ: Ետ դարձուցի Լէյլանին գլուխը՝ հակառակ իր կամքին. բայց ձայնս միշտ անպատասխան կը մնար:

Նորէն առաջ անցայ: Այս անգամ՝ Լէյլանը իր ամբողջ թափով կ'առաջանար, միշտ տեղացող ձիւնը ճեղքելով: Ան կ'ընտրէր իր ճամբան երբեմն աջ, երբեմն ձախ՝ կարաւանին շարքը մեր ետեւ ձգելով:

Մշուշը թանձրացած էր, կը մթնէր. հազիւ երկու քայլ անդին կը տեսնէի: Ձայները կը ցրուէին. խմբակ առ խմբակ՝ մարդիկ ճամբաներ կը փորձէին՝ ելք մը գտնելու համար:

Նոր զգացի, թէ կը մսիմ: Ուզեցի նորէն կանչել. ձայնս խեղդուեցաւ կոկորդիս մէջ, ու ես գրկեցի Լէյլանի վիզը, որ տաք էր եւ քրտնած. անոր հեւացող մարմինէն տաք շոգի մը կը բարձրանար դէպի դէմքս՝ կարծես զիս տաքցնելու համար:

-Լէյլան, Լէյլան...

Ձայնս դողաց: Ձին ականջները սրեց, վիզը զարկաւ կործքիս, ծամեց սանձին երկաթը ու փոնգտաց՝ առաջ նետուելու պատրաստ: Ձեռքս խածի՝ արցունքս զսպելու համար: Բռնեցի բաշերէն, խօսեցայ իրեն՝ հինաւորց ընկերոջ մը պէս.

-Երթանք, Լէյլան:

Ձին դարձաւ փոսի մը շուրջ, ուր ջորեպան մը, թաղիքը ուսերուն, կեցած էր ձիւնին մէջ խրած կարմիր ջորիի մը քով: Ուրիշներ կը համոզէին զինք՝ որ ձգէ քալէ, բայց ան լացախառն ձայնով մը ըսաւ.

-Տասը տարի է՝ ես Գուլէին հետ կը ճամբորդեմ: Կը մնամ: Կ'ազատուինք միասին, կամ կը խեղդուինք միասին:

Սիրտս շարժեցաւ. արդէն լեցուած էի, արցունքներս հոսեցան:

-Լէյլան, Լէյլան...

Ձին կ'անցնէր՝ ձիւնը ճեղքելով: Մեր առջեւ ակ քալող շուքեր չէին երեւեր. ետին՝ կարաւանին ղօղանջները կը խլանային...

Պարապ ու ցուրտ տարածութիւնը դէմքիս կը զարնուէր: Լէյլանը կ'առաջանար ուշացած ճամբորդի մը պէս արագ:

Տեղ-տեղ ան մինչեւ կուրծքը ձինին մէջ կը խրէր, շունչ կ'առնէր: Հազար ու մէկ գուրգուրանքով վիզը կը շոյէի, ձեռքս կ'երկարէի ու չամիչ կը լեցնէի բերանը. հաճոյքով կը ծամէր: Զիս նախազգուշացնելու համար ոտքերը կը շարժէր, ու երբ բաշերը բռնելով կ'ամրանայի կռնակին, թափով կը ցատկէր դուրս՝ խրած տեղէն:

Ինչ որ Լէյլանը կը սպասէր ինձմէ՝ միայն այն էր, որ ամուր մնայի իր կռնակին՝ երբ ոստումով կ'ելլէր փոսէ մը կամ կ'անցնէր մէկ թումբէն* միւսը:

Բոլոր հեռաւոր ձայները մարած էին. միայն իմ սեփական ձայնս ու Լէյլանին փնչոցը կը լսէի: Կը խօսէի հետը, սիրտ կու տայի իրեն՝ ինձի սիրտ տալու համար. նոյնիսկ իր ականջին կը պատմէի գիւղի դէպքերէն, որ չմտածեմ ներկայի մասին...

-Աչքերդ սիրեմ, Լէյլան... երթանք, երթանք, Լէյլան:

Ու մենք կ'երթայինք հովի պէս արագ: Գոնէ ինձի այդպէս կը թուէր. խաւար* տարածութիւնը անսահման էր դէմս:

Անդրադարձայ, որ Լէյլանը վայրէջքի վրայ էր. ձինը միայն ծունկերուն կը հասնէր: Ան պահ մը կանգնեցաւ, շրջապատը չափեց, եւ արագ՝ ետեւի ոտքերուն վրայ դառնալով փոխեց ճամբան. բարձրութիւն մը անցաւ. բռնեց ուրիշ գառիվար մը: